դէն գիտէք՝ որ Ռոստովի վաճառականութեան մի մասն Նախիջևանցի Հայոց ձեռքն է. սակայն և ոչ մի հայագիր վերտառութիւն չզարկաւ աչքիս բաց յայսմանէ, հայերէն մականունքն ևս այլայլած գտայ, այլ և յախուռն կերպով թարգմանած. նոյնպէս գեղեցիկ եաւն վերջաւորութիւնը ոչի փոխուած։ Շատ կարելի է որ Նախիջևանցիք, կամ Ռոստովցի հայկազունք՝ այդ մասնկանց և վերջաւորութեանց խնդիրը բծախնդրութիւն համարին. սակայն ազգային ոգւոյ նախանձախնդիր մարդը, փոքրէն մեծը գուշակելով՝ անկարելի է որ չվշտանայ։ Ո՞ր են այժմ ասկէ երկու հարիւր տարի առաջ մեծանուն և փարթամ Եանովիչ, Վարդերեսևիչ, Ակոբովիչ, և այլ Լեհաստանի հայկազուն վաճառականներն և ազնուականներն. չէ որ նոքա տակաւ հեռանալով յազգութենէ՝ բոլորովին օտարացան լեհանալով։

Առաջ գնալով, քաղաքին արուարձաններուն կը մօտենայի, և ահա տափարակ դաշտին վրայ յերևան եկաւ հայաբնակ Նախիջևան քաղաքն իւր կանոնաւորեալ փողոցներովն և գմբէթազարդ եկեղեցեաք, բարձրաբերձ զանգակատամբ, որոց գագաթան ոսկեզօծ խաչերը դէպ 'ի մուտս խոնարհած արևուն ճառագայթներէն գեղեցիկ կը ցոլային։

Նոյն օրը թագաժառանգ պայազատին Նիկոլայոս Ալեքսանդրովչի ծննդեան օրը լինելով, բոլոր քաղաքը եռագոյն դրօշակներով զարդարուած էր. օրը հանդարտ և ջերին, փողոցաց մէջ բազմութիւն զբօսասիրաց, այլ որ սխրալին և քան զամենայն ինչ ինձ հաճոյական, ամէն կողմանէ Հայոց բարբառը կը լսէի, գրեթէ ամէն տեսածս